«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 72. Պատասխանատվությունը կատարողական վարույթի ընթացքում թույլ տրված խախտումների համար

(վերնագիրը խմբ. 16.12.05 ՀՕ-18-Ն)

1. Հարկադիր կատարողի որոշումները կամ օրինական պահանջները դիտավորությամբ չկատարելը կամ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականություններ կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:~~Քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ:~~

2. Դատական ակտի կատարմամբ պայմանավորված՝ հարկադիր կատարողին զրպարտելու, ինչպես նաև նրա կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի կամ հարկադիր կատարողի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքում առաջանում է քրեական պատասխանատվություն: Այդ դեպքերում միջնորդություն է ներկայացվում դատախազություն՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Հոդված 73. Պատասխանատվությունը բանկի կամ ~~այլ~~ ֆինանսավարկային այլ կազմակերպության կողմից կատարողական թերթը չկատարելու համար

1. Պարտապանի հաշիվների սպասարկում իրականացնող բանկի կամ ֆինանսավարկային այլ կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված պարտապանից դրամական միջոցներ բռնագանձելու պահանջները չկատարելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

~~Պարտապանի հաշիվների սպասարկում իրականացնող բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված պարտապանից դրամական միջոցներ բռնագանձելու պահանջները չկատարելը հիմք է հարկադիր կատարողի կողմից այդ բանկին կամ վարկային կազմակերպությանը բռնագանձվող գումարի հիսուն տոկոսի չափով տուգանելու համար:~~